«ԱՐՏԱԿԱՐԳ ԱԼԻՔ»
լրատվական կենտրոն

- Աստված փրկում է նրան, ով ցանկանում է փրկվել, Աստված պահպանում է իրազեկ պատրաստվածին:

- Օգնություն պարգևող ձեռքերն աղոթող շուրթերից սուրբ են:

Ռ. Ինգերսոլ

- Եթե գիտեք՝ ինչ պետք է անել աղետների ժամանակ, Դուք կարող եք կյանքեր փրկել, առաջին հերթին՝ Ձերն ու մերձավորներինը:

- Եթե մարդիկ ավելի շատ մտածեին այն մասին, որ գիտելիքը փրկություն է, ամբողջ տառապանքի չնչին մասն էլ չէր լինի. մարդկային ամբողջ դժբախտությունը անգիտության կամ տգիտության հետեւանք է:

Ագի-Յոգա

- Հիմարություն է մեռնելը մահվան սարսափից:

Սենեկա

- Այս կյանքում միայն նա կարող է հաղթել, ով կհաղթահարի իր վախը, ալարկոտությունն ու անվստահությունը:

Սուվորով

- Ձեր կյանքի վերջում աշխարհը պիտի դառնա ավելի լավը, որովհետեւ Դուք եք այնտեղով անցել:

- Օրինակ վերցրեք արեւի ժամացույցից, միայն ուրախ ու լուսավոր օրերի հաշիվը պահեք:

Գերմանական ասացվածք

- Եթե ցանկանում եք, որ կյանքը Ձեզ ժպտա, նվիրեք նրան գոնե Ձեր լավ տրամադրությունը:

Սպինոզա

- Խուճապը կարող է ավելի մեծ ավերածություններ պատճառել, քան բուն աղետը:

- Փորձանքը գալուց առաջ լուր չի ուղարկում, հարկավոր է միշտ պատրաստ լինել:

«ԱՐՏԱԿԱՐԳ ԱԼԻՔ»
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ով իրազեկված է, նա պաշտպանված է

Ամեն տարի բնական, տեխնածին, բնապահպանական, համաճարակային ու սոցիալական աղետները լուրջ վնաս են հասցնում մեր երկրին ու ժողովրդին: Միջազգային փորձագետները նշում են, որ աղետներն ամենամեծ վնասը հասցնում են աղքատ ու զարգացող երկրներին, որտեղ աղետների հակազդման համակարգերը գտնվում են սաղմնային փուլում, իսկ ֆինանսական միջոցների սղությունը թույլ չի տալիս լուրջ ներդրումներ կատարել արտակարգ իրավիճակների կանխարգելման, վտանգների գնահատման և ռիսկերի նվազեցման ոլորտում:

Այդ պատճառով երկրի զարգացման համար նախատեսված առանց այն էլ սուղ միջոցները, մեծ մասամբ ստիպողաբար, նպատակամղվում են աղետների հետևանքների վերացմանը և վնասների փոխհատուցմանը, ինչն էլ, բնականաբար, խոչընդոտում է երկրի կայուն զարգացումը:

Ֆրանսիացի փորձագետների մի խումբ, Հայաստանում կարճ ժամանակ աշխատելուց հետո, մեր երկիրն անվանեց «աղետների լաբորատորիա». երկրե-երկիր շրջելու հարկ չկա, այստեղ կարելի է ուսումնասիրել բոլոր աղետները:

Եթե սոցիոլոգիական հարցում անցկացվի և հարցմանը ներգրավվեն տարբեր սոցիալական խավերի, կուսակցությունների, բլոկների ու ֆորմատների, տարբեր սեռի, կրոնի, տարիքի, դիրքի մարդիկ՝ հարյուրից հարյուր մեկը կասի, որ մեզ անհրաժեշտ է արտակարգ իրավիճակների կառավարման հզոր ու կուռ համակարգ՝ տեխնիկական հարուստ հագեցվածությամբ, գիտության վերջին նվաճումները յուրացրած և ճգնաժամային կառավարման հմտություններին տիրապետող անձնակազմով:

Այս մտածելակերպով է հիմա համակված ողջ աշխարհը, նաև մենք, որ տեսել ու դեռ հիշողության մեջ թարմ պահել ենք Սպիտակի երկրաշարժի ողբերգական պատկերները…

1988 թվական, դեկտեմբերի 7

Ասում են՝ մարդ ինչ հիվանդություն ունի, դառնում է դրա նեղմասնագետը: Մեր ցավի տերը չէր կարող, նույնիսկ պատերազմական ու տնտեսական ճգնաժամերի մեջ, չմտածել «բուժվելու» մասին: Բուժումը մեկն էր՝ այնպես անել, որ ցավը չկրկնվի: Տեսել ու մեր մաշկի վրա զգացել էինք, թե ինչ ծանր հետևանքներ են ունենում անգիտությունը, անտեղյակությունը, անկազմակերպվածությունը, ստույգ սպառնացող աղետին չպատրաստվելը: Ու այս ժխտական նախածանցները վերաբերում էին բոլորին՝ մեծ ու փոքր, պաշտոնյա ու անպաշտոն, քաղաքաբնակ ու գյուղաբնակ: Մեր օրացույցը մեկ օր էլ սևի մեջ առավ: Էպիկենտրոնում 9-10 բալ հզորությամբ ցնցումը խլեց տարածքի բնակչության երեքից մեկի կյանքը... նյութական հսկայական կորուստների մասին խոսելն էլ պարկեշտ չի թվում:

Ամեն բան համեմատության մեջ է ընկալվում: Ուրեմն, եկեք ընկալենք. Ճապոնիայում, Կոբեի՝ էպիկենտրոնում նույն ուժգնությունն ունեցած երկրաշարժը խլեց երեք հազարից մեկի կյանքը: Հազար անգամ պակաս ցավ ու վիշտ...

Մեր երկրաշարժի հետևանքները ծանր էին ոչ միայն սեյսմիկ ռիսկի սխալ գնահատման, ինժեներաշինարարական սխալ-բացթողում-անփութություն-հանցագործությունների պատճառով: Կառավարության և տեղական ինքնակառավարման մարմինների պատրաստվածությունը չափազանց ցածր էր սովորական արտակարգ իրավիճակի համար անգամ, էլ ուր մնաց՝ այնպիսի լայնամասշտաբ աղետի ժամանակ գործելուն, ինչպիսին տեղի ունեցած երկրաշարժն էր: Բանիմաց համակարգող մարմնի, նույնիսկ քաղաքացիական պաշտպանության ուժերի գործողությունների պլանների, համապատասխան տեխնիկայի ու նյութական պաշարների, հմուտ փրկարարների, փորձառու կադրերի բացակայություն. էլ ի՞նչ էր պետք երկրաշարժից արհավիրք ստանալու համար: Էլ չենք խոսում, որ հայաստանցիներս հեռավոր պատկերացում չունեինք անգամ, թե ինչ պետք է անել կամ ինչ պետք չէ անել ուժեղ երկրաշարժից առաջ, դրա ժամանակ ու դրանից հետո:

Եվ արեցինք այն, ինչ պետք չէր անել, չարեցինք այն՝ ինչ պետք էր:

Ամեն ինչ կատարվում էր անկազմակերպ, տարերայնորեն: Ոչ մի նախնական պլան կամ ծրագիր: Մարդիկ, նույնիսկ բժիշկները, առաջին օգնության այբն ու բենը չգիտեին:

Միայն երրորդ օրը սկսեցին աշխարհի տարբեր ծայրերից փրկարարներ ժամանել:

***

Դանակը ոսկորից անցել էր:

Հիմա, իհարկե, շատ հարցերում մի քանի տառ սովորել ենք, բավական գործ է արվել:

Անկախություն էր ու պատերազմ, բայց նույնիսկ այն ծանր օրերին հաղթանակեց գիտակցումը, որ աղետաշատ ու պատերազմող պետությանը հարկավոր է մի կառույց, որը կուսումնասիրի սպասվող արտակարգ իրավիճակները, կմշակի դրանց դեմ պայքարի ծրագիր և կիրականացնի ու կհամակարգի այդ աշխատանքները:

1991 թվականի հուլիսին ստեղծվեց սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունը, իսկ դեկտեմբերին՝ արտակարգ իրավիճակների վարչությունը (այժմ՝ ՀՀ ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայություն):

Այս կառույցների կարևորությունը երկրի բնականոն զարգացման մեջ հիմա ոչ ոք չի վիճարկի: Սակայն, եթե փորձենք մի սոցիոլոգիական հարցում էլ կատարել. «Աղետների կանխարգելման, դրանց հետևանքների, համայնքների խոցելիության նվազեցման հնարավորությունը կմեծանա՞, եթե բնակչությունն ու պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններն ավելի իրազեկված լինեն», վստահ չենք, թե հարյուրից գոնե կեսը կասի՝ այո:

Կան մարդիկ, ու այդպիսիք քիչ չեն նույնիսկ կառավարական մակարդակներում, որոնց թվում է, թե բնավ էլ հարկ չկա ժողովրդին ահուսարսափի մեջ պահել՝ տարբեր վտանգներով ու ռիսկերով վախեցնելով: Ավելին, նրանք համոզված են, թե արտագաղթը պայմանավորված է նաև սրանով: Իսկ եթե վտանգներն ու ռիսկերը պատճառ լինեին, ուրեմն բոլոր ճապոնացիները երկրաշարժից

վաղուց փախել ու հասել էին Ռուսաստան, իսկ ամերիկացիները՝ տոռնադոներից ու ցունամիներից իրենց փրկությունն արդեն գտել էին, ասենք, Հայաստանում: Ակնհայտ փաստ է, որ նման բան աշխարհում չկա:

Վախը հենց անիմացությունն է, անիրազեկությունը: Կրկին անդրադառնանք ճապոնացիներին: Հայտնի է, որ ամեն ճապոնացի տարին մի քանի անգամ մասնակցում է տարբեր տեսակի ուսումնավարժությունների, տեսական ու գործնական վարժանքների: Եթե սրան էլ գումարենք այն հաճախակի ցնցումները, որոնց անվերջ ենթակա են նրանց հայրենի կղզիները, պետք է ենթադրել, որ բոլոր ճապոնացիների աչքերում սարսափի արտահայտությունից զատ այլ բան գտնել հնարավոր պետք է չլիներ: Բայց տեսեք, գոնե հեռուստատեսությամբ, թե ինչ հրաշալի, երբեմն անհոգ ժպիտ են պարունակում ճապոնուհիների աչքերը, կամ ինչ վստահ ու հանդարտ են աշխարհին նայում տղամարդիկ:

Ի վերջո, Զևսի փառքը մարեց այն պահին, երբ մարդը հասկացավ, որ կայծակը բնական երևույթ է, Պոսեյդոնի եռաժանին բթացավ, երբ պարզվեց, որ ծովի ալիքներն էլ, նույնիսկ ամենաահեղները, իրենց գիտական բացատրությունն ունեն: Իսկ երբ գալիս ու հասնում ենք մեր այսօրվա դավանանքին՝ քրիստոնեությանը, Աստվածաշնչից, կարելի է ասել, հենց առաջին տողերից փրկության հարցում կարևորվում է իրազեկվածությունը: Խոսքը Նոյի ու տապանի մասին է: Ընդհանրապես, Նոյի տապանը դարձել է փրկության խորհրդանիշ: Սակայն քչերն են ուշադրություն դարձնում Աստվածաշնչի այն տողերին, որտեղ Աստված Նոյին նկարագրում է փրկության միջոցները: «...Արդ, դու քեզ համար խիժաբեր փայտից մի տապան շինիր, և այն ծեփիր կուպրով ներսից ու դրսից... Տապանի երկարությունը երեք հարյուր կանգուն, լայնությունը հիսուն կանգուն և բարձրությունը երեսուն կանգուն: Տապանին լուսամուտ շինես և տապանի դուռը կողքից դնես: Ներքնատնով, միջնատնով և վերնատնով շինես այն...»:

***

Ընդհանրապես, տեղեկացվածության յուրաքանչյուր դրսևորում նպաստում է, որ մարդ իրեն ավելի ապահով զգա: Հանրա-

գիտարանային հայտնի ճշմարտություն է. ***մարդիկ մի ներքին պահանջ՝ բնազդ ունեն, իմանալու, թե ինչ է կատարվում իրենց անմիջական փորձառությունից և կյանքի շրջանակից դուրս: Երբ մարդը տեղյակ է լինում այն իրադարձություններին, որոնք դուրս են իր անմիջական տեսադաշտից, նրա մեջ առաջանում է ապահովության, հանգամանքները ղեկավարելի դարձնելու և ինքնավստահության զգացում:***

Մարդ նաև բնազդական պահանջ ունի իմանալու, թե իրեն ինչ է սպասվում ապագայում: Սա նույնպես մի ձգտում է, որ գալիս է դարերի խորքից: Դեռ մի կողմ թողնենք թուղթ նայող ու սուրճի մրուրի մեջ ապագան տեսնող գուշակների վայելած ժողովրդականությունը: Ապագան տեսնելու ամենահայտնի գուշակի՝ Նոստրադամուսի մեթոդները գոնե գիտությանն անհայտ են, հետևաբար՝ կասկածելի: Կա՞ր աշխարհում, նաև Հայաստանում, ավելի փնտրված գիրք, քան «Եփրեմվերդին»: Սա էլ գիտությունն անվերապահորեն չի ընդունում: Սակայն մեզ թույլ տանք փոքր-ինչ շեղվել:

Նախկինում, երբ գիտատեխնիկական առաջընթացը դեռ չէր արձանագրել իր լրջագույն հաջողությունները հատկապես տիեզերագնացության բնագավառում, եղանակային կանխատեսումները շատ ավելի նման էին շամանների ու մոգերի գուշակությունների: Լավագույն կանխատեսումները գալիս էին էֆիմերտեից, կամ, ինչպես ժողովրդի մեջ է ընդունված՝ Եփրեմվերդի: Մարդկանց մեջ դեռ նստած է այն գաղափարը, որ Եփրեմվերդին Նոստրադամուսի նման մի մարդ է, ի վերուստ օժտված մոգ, որ դարերի ու հազարամյակների համար արդեն տվել է իր կանխատեսումները, եւ ոչ միայն եղանակային երեւույթների մասին: Այնինչ՝ Եփրեմվերդի, էֆիմերտե, կամ, ավելի ճիշտ, էֆեմերիդ՝ հայերեն թարգմանվում է պարզապես օրագիր: Էֆեմերիդ են կոչվում նաեւ արեւի, լուսնի եւ մոլորակների՝ երկնակամարում ամենօրյա դիրքերի գրանցումները կամ աղյուսակները: Այսօր էլ շատերը հավատում են, որ դարերի ու հազարամյակների փորձություն անցած այս օրագիրն առավել քան արժանահավատ է, որ այստեղ բերված տեղեկություններն ու գուշակությունները հավաստի են: Եթե խնդրին մոտենանք այս տեսակետից, ապա պետք է ընդունենք, որ մարդը որեւէ կերպ չի կարող ազդել բնության երեւույթների վրա,

որ դրանք բացառապես տիեզերական մարմինների ազդեցության հետեւանք են, ավելին, հասարակական կյանքում տեղի ունեցող երեւույթներն էլ մեծապես կախված են մեզնից անչափելիորեն հեռու գտնվող աստղ-մոլորակներից:

Բերենք հերթական տարվա համար արված մի կանխագուշակում՝ ըստ էֆիմերտեի.

«Երբ Արեգակը մարտի 21-ին մտնի Խոյի առաջին կետ, տարվա իշխանը կլինի Փայլածուն՝ Այծեղջյուրի հետ, որը Երեւակի տունն է: Առաջիկա տարին երաշտ է եւ ցամաքային, կլինեն մարդկանց խռովություն, խոշոր անասունների կոտորած, իսկ մանր չորքոտանի կենդանիների համար տարին հաջողակ է: Ձեթը սակավ է, գինին եւ միրգը՝ շատ: Ձմռան սկիզբը ցուրտ է, միջնամասը՝ բարեխառն, վերջը՝ հողմակոծ: Գարունը ջրառատ է, ցուրտ եւ եղյամահար: Ամառն անձրեւոտ է սաստիկ հողմահոսության պատճառով, ցորենի եւ արտերի մի մասը կվնասվի, ջրերը եւ առուները կհեղեղվեն: Աշնանը կփչեն անձրեւաբեր քամիներ: Նայեք Աստծուն, որպեսզի չլինի երեխաների եւ տղամարդկանց սաստիկ տենդ… Աղոթեցեք առ Աստված, որ չսկսվի մահտարաժամ (համաճարակ), երկրաշարժ եւ կայծակնահարություն… եվ այլն»:

Հավատավորը կասի՝ տեսա՞ք ինչքան բան համընկավ, անհավատը թե՝ նման ընդհանուր գուշակություններ բոլոր տարիների համար էլ կարելի է անել, ու չի բացառվում, որ շատ բան համընկնի:

Սակայն կան կանխատեսումներ, որոնք հիմնված են փորձի վրա, այսինքն՝ արժանահավատ են: Դարերի ընթացքում ձեռք բերած կենսափորձը նաև անգրագետ գյուղացուն հնարավորություն է տվել եղանակային կարճաժամկետ ճիշտ կանխատեսումներ անել: Ու նա օգտագործել է դրանք՝ գյուղատնտեսական աշխատանքներն ու իր կենցաղը կազմակերպելիս: Այսօր էլ կարող ենք մեկից լսել՝ անձրև է գալու: Ինչու՞: Որովհետև արևը ծակող է, կամ՝ ծիծեռնակները ցածր են թռչում: Կանխատեսումները (կրկնում ենք՝ ոչ թե գուշակությունները) ապահովության զգացում առաջացնելու լրջագույն միջոց են:

Դե, եկեք հասկանանք, թե ինչ վստահ կպատրաստվենք վաղվա օրվան, եթե իմանանք, որ ցրտելու է, անձրև կամ ձյուն է գալու, քամի է բարձրանալու: Սրանք արդեն սովորական, առօրյա բաներ

են: Հիմա պատկերացրեք, թե ինչ հրաշք կլիներ, եթե 1988-ի դեկտեմբերի 6-ին հեռուստատեսությամբ, լուրերի վերջում հաղորդեին՝ վաղը հանրապետության հյուսիսային շրջաններում սպասվում է երկրաշարժ...

***

Գիտելիքը փրկություն է:

Ցավոք դեռ գիտությունը հեռու է երկրաշարժերի կարճաժամկետ կանխատեսումից: Բայց շատ բաներ արդեն կանխատեսելի են: Օրինակ, ջրհեղեղն այսօր հեշտ կանխատեսելի է. հաշվում ես սարերում կուտակված ձյան շերտի հաստությունը, հիդրոմետ ծառայությունից իմանում, թե ինչ եղանակ է սպասվում առաջիկա օրերին (ենթադրենք՝ կտրուկ տաքանալու է), հետո գնում-տեսնում ես, որ անգիտակից մարդիկ կենցաղային աղբ ու ամեն տեսակի թափոն են լցրել հեղեղատարների ու սելավատարների մեջ, նույնիսկ տուն կամ օժանդակ կառույց են սարքել ու նեղացրել դրանց հունը... և վստահ կարող ես կանխատեսել՝ ջրհեղեղ է լինելու: Գրեթե ամեն տարի մեր հանրապետությունում այս պատկերն է:

Սողա՞նք: Խնդրեմ: Հայաստանի սողանքների ճնշող մեծամասնությունը մարդու ներգործության հետեւանք է: Առանց մասնագիտական լուրջ հետազոտությունների եւ հաշվարկների ճեղքում են սարերն ու բլուրները, կառուցում ճանապարհ ու երկաթուղի, շենք ու շինություն, վիրավոր ու բզկտված հողի լեզուն չհասկանալով, նրա թուլացած ու սորուն մարմնին շարունակում են նոր վերքեր հասցնել՝ դարավանդներ մխրճել ու ջրել, չթողնելով, որ ջուրը բնականոն հեռանա, բեռնել ու գերբեռնել քարաբետոնային ծանր կառույցներով՝ զրկելով հողը հավասարակշռությունից:

Ակտիվ սողանքային գոտիներից՝ Հաղարծին, Գոշ, Գնիշիկ, Օձուն, Նուբարաշեն, Կապան, Դիլիջան..., Ողջաբերդն իր դատապարտվածությամբ ասես դասական օրինակ լինի բնության լեզուն չհասկանալու, կորստյան խտացված ցավի, երբ Հայաստանի հենց սրտում, մայրաքաղաքից ընդամենը 20 կմ հեռավորությամբ, բոլորիս աչքի առաջ, ավերվեց ու քարուքանդ եղավ ոչ թե ճակատի գծի սահմանամերձ կամ էլ չոր ու անպտուղ աղքատիկ գյուղակ, այլ մոտ երկու հազար բնակիչ ունեցած բարեկեցիկ ու

գողտրիկ մի բնակավայր: Կարծես թե հարկ չկա որեւէ մեկին բացատրել, այն էլ Հայաստանում, թե ինչ է նշանակում տուն ու տեղ, ծննդավայր ու նախնիների գերեզման կորցնելը:

Ակտիվ սողանքային գործընթացները Ողջաբերդում սկսել են 70-ական թվականներին, այսինքն՝ այն բանից հետո, երբ Ազատի ջրերն ուղղորդվեցին գյուղ, առատորեն տրամադրվելով տնտեսություններին: Մինչ այդ գյուղ մտնող ջուրը միայն լեռնային փոքր աղբյուրներից էր գոյանում, եւ մարդու ու բնության փոխհարաբերությունները ներդաշնակ էին: Սակայն սկսվեց ոռոգման ջրերի անխնա օգտագործումը, դրա հետեւանք՝ ակտիվացավ հողերի սահքը: Իսկ 90-93 թվականներին սողանքն ընդգրկեց գյուղի ամբողջ տարածքը:

Այստեղ արված է այն ամենն, ինչ չէր կարելի անել: Լանջը չէր կարելի կտրատել՝ խախտելով հավասարակշռությունը, չէր կարելի բետոնապատ դարավանդներով ծանրացնել: Հողն իբր առավել արդյունավետ օգտագործելու նպատակով մարդիկ կտրատել են թեք լանջերը, պատրաստել դարավանդներ, տեղադրել բետոնե կամ քարե հենապատեր, իսկ այդպիսի գործողությունները ոչ միայն բզկտում են հողը, այն գերբեռնում, այլեւ խախտում ձնհալոցքային եւ անձրեւային ջրերի բնական հոսքը լանջերով ներքեւ: Բնականորեն վար հոսելու փոխարեն՝ դրանք ներծծվում են լանջերի խորքը, որից հողերը գերխոնավանում են ու կորցնում դիմադրողականությունը: Հետեւանքը՝ հողերի սահք:

Կանխատեսելի՞ էր այս աղետը: Իհարկե՝ այո: Բայց իրազեկվածության բացակայությունը խանգարեց հասկանալու ու կանխելու վտանգը: Իսկ թե անիրազեկության պատճառով քանի նոր սողանք կառաջանա մեր առանց այն էլ փոքր հողակտորի վրա՝ դժվար է ասել:

Հայաստանից տեղափոխվենք Թաիլանդ:

2004 թ. դեկտեմբերի 26-ին Հարավարեւելյան Ասիայում՝ Հնդկական օվկիանոսում տեղի ունեցած հզոր երկրաշարժի առաջացրած ցունամին խլեց ավելի քան 230 հազար մարդու կյանք: Այս աշխարհացունց աղետը ստիպեց ոչ միայն ցավակից լինել, այլեւ դասեր քաղել: Ու լավագույն դասը տվեց իր դպրոցական դասը սերտած 11-ամյա մի աղջնակ: Ազգությամբ անգլուհի, դպրոցական Թիլլի Սմիթն այդ ժամանակ իր ընտանիքի հետ հանգստանում

էր Թաիլանդում: Աղջնակը նահանջող ծովից ճանաչում է ցունամիի նախանշանները եւ վերահաս աղետի մասին նախազգուշացնում իր ծնողներին: Նրանք իրենց հերթին այդ մասին հայտնում են հյուրանոցի տնօրինությանը, ինչից հետո ծովափն արագորեն ազատվում է հանգստացողներից, որոնք դրա շնորհիվ կարողանում են փրկվել:

ԱՄՆ-ի նախկին նախագահ Բիլ Քլինթոնը, որպես ցունամիի հետեւանքների վերացման գծով ՄԱԿ-ի հատուկ դեսպանորդ, 2005 թ. նոյեմբերին Նյու Յորքում հանդիպել է փոքրիկ հերոսուհուն: Քլինթոնի խոսքերով՝ այս պատմությունը եւս մեկ անգամ ապացուցում է, թե ***որքան կարեւոր է աղետների մասին երեխաների եւ երիտասարդների իրազեկվածության մակարդակը բարձրացնելը: Բոլոր երեխաները պետք է իմանան, թե ինչ է անհրաժեշտ անել աղետի դեպքում: Թիլլիի պատմությունը մի փոքրիկ հիշեցում է, որ կրթությունը կարող է որոշիչ դեր խաղալ կյանքի եւ մահվան պայքարում:***

Անգլիացի աղջնակը ցունամիի մասին իմացել էր Թաիլանդ մեկնելուց ընդամենը երկու շաբաթ առաջ, դպրոցում՝ աշխարհագրության դասին: Աղջիկը պատմում է, որ իր մայրը չէր պատկերացնում, թե ինչ է կատարվելու ծովափին, որովհետեւ նա երբեք չէր լսել ցունամիի մասին եւ չգիտեր, թե ինչպես պետք է վարվել: Այժմ Թիլլին ինքն է համոզվել, թե որքան կարեւոր է իրազեկված լինելը. «Ես շատ ուրախ եմ, որ կարողացա փրկվել ցունամիից եւ տխրում եմ այն մարդկանց համար, ովքեր աղետի զոհ դարձան: Հուսով եմ, որ իմ փորձը ոչ միայն ցույց կտա, թե որքան հզոր կարող են լինել կրթությունն ու իրազեկվածությունը, այլեւ կօգնի ապագայում ավելի շատ կյանքեր փրկելու»:

Նման օրինակներ շատ կան, ու բոլորը մեկ առ մեկ թվարկելու հարկ, կարծես, չկա:

ՄԱԿ-ի աղետների նվազեցման միջազգային ռազմավարության տնօրեն Սալվանո Բրիցենոյի կարծիքով, երբ մարդն ընդամենը մի քանի րոպե ունի գիտակցելու, թե ինչ է կատարվում, շատ կարեւոր է իմանալ՝ ինչ պետք է անել ռիսկը նվազեցնելու համար: Շատ երեխաներ արդեն սովորել են ապրել բնական աղետներին ենթակա այնպիսի երկրներում, ինչպիսիք են Ճապոնիան, Իրանը եւ այլն: Յուրաքանչյուրը պետք է տարրական գիտելիքներ ունենա

եւ տեղեկացված լինի այն հիմնական վտանգների մասին, որոնք կարող են սպառնալ իրեն: Եթե մենք այսօր կրթենք մեր երեխաներին, ապա կարող ենք հույս ունենալ, որ կարող ենք աղետների կանխման կուլտուրա ձևավորել ապագա սերունդների համար:

Աշխարհն արդեն հասկացել է իրազեկվածության անհրաժեշտությունը: Զարգացած երկրներն, ունենալով արտակարգ իրավիճակների կառավարման հզոր համակարգեր, ապահովագրական ու խորհրդատվական ընդգրկուն ցանցեր, նաև մեծագույն ուշադրություն են դարձնում բնակչության պատրաստվածությանը, մարդկանց իրազեկմանն ու ուսուցմանը:

Միջազգային փորձագետների դիտարկմամբ՝ եթե բնակչությունն իրազեկված է ու պատրաստված, աղետների հետևանքները հնարավոր է մոտ քառասուն տոկոսով նվազեցնել:

Նախապատմությունը

Աղետների կանխարգելման, դրանց հետևանքների, համայնքների խոցելիության նվազեցման հնարավորությունը մեծ է, եթե բնակչությունն ու պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններն իրազեկված են ու պատրաստված, և կա քաղաքական կամք:

Կենտրոնի ստեղծումը

Աղետաշատ այս երկրում անհրաժեշտություն կար ստեղծել տեղեկատվական-ուսումնական մի կենտրոն, որը պետք է նպաստեր արտակարգ իրավիճակներին դիմակայելու՝ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ՁԼՄ-ների և բնակչության պատրաստվածության բարձրացմանը:

Պետական կառավարման մարմիններ

Այսօր, փառք Աստծո, սայլը տեղից շարժվել է: Կարգավիճակ էլ կա, նոր ու հզոր հրշեջ մեքենաներ էլ, աշխատակիցների աշխատավարձի որոշակի բարձրացում էլ կա, խոստումներ էլ կան... Բայց արի ու տես, որ վտանգներն ու ռիսկերը հաղթահարելու համար դեռևս շատ քիչ է, որ միայն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունում հասկանան գործի լրջությունը, լինեն տեղեկացված ու պատրաստված և ունենան քաղաքական կամք: Բոլորին է հայտնի, որ հզոր աղետների դիմակայելիս պետությունը գործի է դնում իր բոլոր ուժերը՝ բանակ, տրանսպորտ ու կապ, գյուղատնտեսություն ու առողջապահություն և այլն: Ամբողջ աշխարհում է այդպես: Ուրեմն, պետք է պատրաստ լինեն բոլորը, հատկապես մեր դեպքում, երբ ֆրանսիացի փորձագետների խումբն ասում է, թե Հայաստանը «աղետների լաբորատորիա» է: Բոլոր ժողովրդավար երկրներում, ինչպիսին ուզում ենք լինել նաև մենք, 4-5 տարին մեկ կառավարություն է փոխվում, ու նախարարների քաղաքական պաշտոնները զբաղեցնում են նոր

մարդիկ: Մեզ հետաքրքրող հարցերում նրանց տեղեկացվածությունն ու պատրաստվածությունը, հատկապես մեզանում, հեռու են որոշիչ լինելուց՝ պաշտոնին նշանակելիս կամ ընտրվելիս:

Տեղական ինքնակառավարման մարմիններ

Շարունակենք ծուռ նստած մնալ: Դարձյալ ենթադրենք, թե սոցիոլոգիական հարցում ենք կատարում. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ տվե՞լ եք գոնե մեկ հարց թեկնածուներից գոնե մեկին, թե որքանով է նա պատրաստ լուծելու համայնքի կամ մարզի բնակչության պաշտպանվածության հարցերը արտակարգ իրավիճակների դեպքում: Ուրախ կլինենք իմանալ, որ հարյուրից գոնե մեկ-երկուսը կասի՝ այո: Այնինչ՝ պետք է հարցնել: Բայց քաղաքականացվածության այն հզոր փայլատակումները, որ ամեն անգամ շանթ ու որոտի պես մարդկանց գլխին են թափվում նույնիսկ ամենախուլ ու փոքրիկ գյուղում, լուրջ մտահոգությունների տեղիք են տալիս:

Հեռանանք, սակայն, քաղաքականությունից և իրերի դրվածքն ընդունենք այնպես, ինչպես կա: Պարզապես մեկ անգամ էլ հիշենք ու հիշեցնենք, որ Սպիտակի երկրաշարժի աղետալիությունը մեծ մասամբ պայմանավորված էր հենց պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների անիմացությամբ ու անհետևողականությամբ:

Զանգվածային լրատվության միջոցներ

Այստեղ շատ ավելի կարևոր է ոչ թե **ինչ**, այլ **ինչպես** գրելը: Աշխարհն արդեն հասկացել է, որ չի կարող լինել կյանքի բոլոր ոլորտները սպասարկող ժուռնալիստ: Երևի միայն մեզ մոտ է, որ նույն լրագրողը լրատվական նույն ծրագրում կարող է մի քանի սյուժե պատրաստել՝ մեկը բանկային գործի, մյուսը՝ գյուղատնտեսության, երրորդը՝ ավանգարդիստական արվեստի թեմայով: Իսկ երբ խոսքը վերաբերում է մարդկանց կյանքի անվտանգությանը՝ ամեն մի վրիպակ ու բացթողում մտնում է խոշորացույցի տակ: Անտեղյակ ու անպատրաստ լրագրողի պատրաստած նյութը ոչ միայն չի ծառայում իր նպատակին, այլև արտակարգ իրավիճակ-

ներում կարող է ունենալ վտանգավոր հետևանքներ, ընդհուպ՝ առաջացնել համատարած խուճապ:

Ի դեպ, 2004 թվականի 42-րդ համարում «Արտակարգ թերթը» մի հոդված տպագրեց այս վերտառությամբ. «Թե ինչպես բարձր բալայնության խուճապը ցնցեց մայրաքաղաքը»:

Հատվածաբար մեջբերենք հոդվածը:

«Առաջին անգամ չէր, որ սպասվող իբր աշխարհակործան երկրաշարժի մասին լուրեր էին տարածվում: Մեկ էլ տեսար, լուր եկավ, թե Ավանի բարձրահարկ շենքերից մեկն է մտել մի մարդ, տարածել թռուցիկներ՝ իբր շուտով երկրաշարժ է լինելու, լքեք ձեր տները: Վատ կանխատեսումները սիրահոժար ընկալող մեր քաղաքացիներից շատերն էին տրվում նման սադրանքների, նույնիսկ զանգահարում ԱԻՎ, սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն, հարցնում՝ ճի՞շտ են լուրերը: Իսկ երբ հարցնում էինք՝ ի՞նչ տեսակի մարդ էր, նկարագրում էին ու վերջում ամփոփում. ոնց որ մի քիչ շեղված լիներ: Շեղված, թե խեղված, հիվանդ, թե՝ հանցագործ, էականն այդ չէր. մարդիկ այնուամենայնիվ, կամ, համենայն դեպս, առժամանակ լքում էին իրենց տները, չնայած երդում-կոտոր էինք լինում, որ նման գիտական կանխատեսում չկա, ու ցավոք, գիտությունը դեռ չի հասել այդ մակարդակին, որ լինի:

Նման դեպքերը, մեկ Ավանում, մեկ Էրեբունու կամ Նոր Նորքի զանգվածներում, այլուր, սովորաբար կրում էին, այսպես ասած՝ լոկալ, տեղային բնույթ, որոնց թեթև կոհակները բախվելով սթափության կոչերին՝ մարում էին: Սակայն այն, ինչ եղավ այս շաբաթ, երկուշաբթի օրը, նոյեմբերի 8-ին, գերազանցեց բոլոր սպասելիքները: Նույն ԱԻՎ-ի, հատկապես նրա սեյսմիկ ծառայության հեռախոսները հազիվ դիմացան լարվածությանը: Զանգահարում էին Երևանի բոլոր համայնքներից, նույնիսկ մարզերից, անհանգիստ հարցեր տալիս, պահանջում բացատրություններ: Շուտով գործին խառնվեցին լրագրողները, որոնք մեզնից պակաս չգիտեն, որ երկրաշարժն առայժմ, ցավոք, անկանխատեսելի երևույթ է.

- Հասկանում ենք, որ նման կանխատեսման հնարավորություն չկա, բայց ախր շատ են անհանգստացնում: Ավելին. այսինչ ու այնինչ դպրոցում դասերը դադարեցրել ու երեխաներին ուղարկել են տուն, նույնիսկ ինստիտուտներում խափանվել է ուսումնական

նորմալ ընթացքը: Մարդիկ հիմնարկներից ու տներից դուրս են փախչում:

Լուրերը գնալով ավելի խուճապային բնույթ էին ստանում, ալիքն ահագնանում էր:

Հասկանալով, որ խուճապն արդեն վտանգավոր չափի է հասնում, ԱԻՎ լրատվության կենտրոնն ու օպերատիվ կառավարման վարչությունը գործի անցան:

ԱԻՎ օպերատիվ կառավարման վարչությունը նամակ-հեռախոսագրեր ուղարկեց բոլոր մարզային ու Երևանի համայնքային ստորաբաժանումներ, ինչպես նաև ոստիկանության և անվտանգության ծառայության հերթապահ մասեր: Իրազեկվեցին բոլոր ՁԼՄ-ները, առաջին հերթին՝ հեռուստաընկերություններն ու ռադիոընկերությունները, հաշվի առնելով հասարակությանն օպերատիվորեն իրազեկելու նրանց հնարավորությունը: Տրամադրվեց նաև ցանկը այն իրազեկ և իրավասու փորձագետների, որոնք արդեն պատրաստ էին իրենց հեղինակավոր խոսքն ասելու բնակչությանը:

Զանգվածային լրատվության միջոցներն իրենց հեռատես ու հավասարակշիռ գործելակերպով կարողացան մարել խուճապը: Երեկոյան արդեն կյանքը մտել էր իր բնականոն հունը, ու շատերն էին իրար հարցնում. «Ախր ո՞նց էինք հավատում այդ լուրերին, ինչ միամիտ ենք...»:

Կարծում ենք, որ մեջբերված հատվածից երևում է ՁԼՄ-ների դերի կարևորությունը: Ահա, այդ դերակատարումն ավելի արդյունավետ դարձնելու հույսով էր, որ 2006 թ. փետրվարին «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնի բրիֆինգ սրահում հայ-էստոնական համագործակցության շրջանակներում էստոնիայից եկած մասնագետներն ու ՀՀ փրկարար ծառայության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը կազմակերպել էին «Լրատվությունն արտակարգ իրավիճակներում» թեմայով սեմինար:

Սեմինարի մասնակիցները հենց ՁԼՄ ներկայացուցիչներն էին, նաև այլ գերատեսչությունների լրատվության պատասխանատուներ, որոնց ուզում էինք փոխանցել աշխարհում և մեզանում կուտակած փորձը: Փոխանցեցինք, լավն ու վատը, քիչն ու շատը՝ ուրիշ հարց է: Բայց այսօր որևէ միջոցառում կազմակերպելիս, երբ

հրավիրում ես ԶԼՄ ներկայացուցիչներ, հասկանում ես, որ գրեթե բոլոր դեմքերը փոխվել են:

Բնակչությունը

Ամենաբարդն ու ծախսատարը բնակչությանն իրազեկելու, տեղեկացնելու ու պատրաստելու խնդիրն է: Սակայն սա է հենց գերխնդիրը: Ի վերջո, յուրաքանչյուր արտակարգ իրավիճակի դեպքում, լինի աշխարհակործան երկրաշարժ, թե ամեն օր պատահող ավտովթար ու հրդեհ, մինչև արագ արձագանքման ուժերի ժամանումը բնակիչը, կամ մի քանիսը, մենակ են մնում վտանգին դեմ հանդիման: Ուրեմն, ինքնօգնության ու փոխօգնության կարողությունից է մեծապես կախված լինում փրկությունը:

Բացի այս, բնակչությունը մենք ենք, բոլորս, ժողովուրդը: Ու «ժողովրդի ծոցից» են դուրս գալիս պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, զանգվածային լրա-տվության միջոցների ներկայացուցիչները՝ ստանձնելով որոշակի պարտավորություններ: Հետևաբար, որքան պատրաստված նրանք լինեն, այնքան ավելի հստակ կպատկերացնեն իրենց պարտավորություններն ու ավելի լավ կղեկավարեն կամ ավելի որակյալ կիրականացնեն տեղեկացնելու իրենց առաքելությունը:

Ժուռնալիստիկայի հարցում կա ևս մեկ կարևոր հանգամանք: Հասկանալի է, որ հեռուստաընկերություններն ու թերթերը, զանգվածային լրատվության անկախ միջոցները նաև իրենց հանապազօրյա հացն են վաստակում իրենց մասնագիտությամբ: Այս ճանապարհին նրանք միշտ էլ փնտրում են սենսացիոն նյութեր և «խորշում» են տաղտկալի իմացաբանական թեմաներից: Աշխարհում է այսպես, ու սրանից չես փախչի: Իսկ բնակչությանն ուսուցանելու, տեղեկացնելու ավելի արդյունավետ միջոց, քան ԶԼՄ-ների տարբեր խողովակներն են՝ չկա: Այլ խնդիր է, որ արտակարգ իրավիճակը ծագելու պահից այն դառնում է ամենափնտրված թեմա ժուռնալիստի համար: Այսինքն, բնակչությանը մատուցված թեման պետք է լինի հետաքրքիր, դիտարժան, իսկ երբ մանկավարժի նման սկսում ես թվարկել ինչ-որ աղետից փրկվելու վարքականոններ՝ նույն բնակիչը պարզապես դիմում է հեռակառավարման վահանակի (պուլտի) օգնությանը: Այս լրջագույն

խնդիրն աշխարհում արդեն լուծված է: Ամերիկացիների «911» շարքի նյութերը մեծ ժողովրդայնություն են վայելում ոչ միայն հետաքրքրաշարժությամբ, այլև իրենց մեջ կրում են իմացաբանական և ուսուցողական հզոր լիցք: Նույնիսկ մեր հեռուստադիտողը կլանված նայում է զուտ ամերիկյան կենցաղում ծագած խնդիրների ու դրանց լուծման միջոցների մասին նյութերը: Մի՞թե չկա մեր կենցաղը պատկերող նման տեսանյութերի կարիք:

Եվ վերջապես, կառավարությանը հսկելու և երկրի կառավարմանն ակտիվորեն մասնակցելու համար քաղաքացիներն անհրաժեշտ ինֆորմացիայի կարիք ունեն: ***Բաց և պատասխանատու կառավարություն ունենալու համար նախ և առաջ անհրաժեշտ է ձևավորել իրազեկ հասարակություն: Սա ապահովելու հիմնական կենսական սկզբունքը ինֆորմացիայի համընդհանուր մատչելիությունն է:***

Ամփոփենք

Հաշվի առնելով վերը շարադրվածը, նաև հիշելով Սպիտակի երկրաշարժի փորձը՝ պարզապես անհրաժեշտություն էր ունենալ մի տեղեկատվական կենտրոն՝ բնակչության ամենալայն խավերի համար տեղեկատվական, ուսուցողական ու խորհրդատվական դաշտ ապահովելու համար: Կենտրոնը պետք է նպաստեր արտակարգ իրավիճակներին դիմակայելու՝ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ՁԼՄ-ների և բնակչության պատրաստվածության բարձրացմանը:

2000 թվականին, երբ Հայաստանի փրկարար ծառայությունում (այն ժամանակ՝ Արտակարգ իրավիճակների վարչություն) մշակվում էր արտակարգ իրավիճակների կառավարման հանրային տեղեկատվության նոր հայեցակարգը, և հասարակության իրազեկվածության ապահովումը դարձել էր օրախնդիր, հայեցակարգի հեղինակները, նրանք, ովքեր մշակել ու ստեղծել էին արտակարգ իրավիճակների և ներքին գործերի նախարարությունների լրատվական ծառայությունները, սեփական կենսափորձից ելնելով, ուսումնասիրելով և հաշվի առնելով միջազգային փորձը (հիմնականում ՆԱՏՕ-ի բուդապեշտյան հրահանգները), կազմեցին ՀՀ արտակարգ իրավիճակների կառավարման «Արտակարգ

ալիք» լրատվական կենտրոնի ծրագիրը, որը նախատեսում է իրազեկման ծրագրերի և լրատվական ամբողջ դաշտի ընդգրկումը մասնագիտացված մեկ կառույցի մեջ, որն ամբողջ երկրի համար պետք է մշակեր ճգնաժամային տեղեկատվության քաղաքականություն, համակարգեր երկրի ազգային միջգերատեսչական լրատվական կենտրոնի գործունեությունը: Դրա բոլոր օղակները՝ տեղեկատվական խողովակները՝ միմյանց օգնելով ու լրացնելով, պետք է գործեին համակարգված ու ներդաշնակ՝ ամենատարբեր լսարանների համար իրականացնելով միևնույն քաղաքականությունը:

Կենտրոնի գործունեության վերջնական նպատակն է՝ **ձևավորել բնական, տեխնածին, համաճարակային, էկոլոգիական և սոցիալական տարաբնույթ աղետները կառավարելու պատրաստ, ունակ ու իրազեկ քաղաքացի ունեցող համայնք (մարզ)՝ խոցելիության նվազեցման կայուն համակարգով:**

Ինչ ունենք այսօր

Այսօր՝ մոտ տասը տարի անց, «Արտակարգ ալիքն» այն միակ կայացած և հուսալի լրատվական կենտրոնն է, որ հուսալի և թարմ տեղեկատվություն է ապահովում՝ Հայաստանում ու աշխարհում տեղի ունեցող արտակարգ իրավիճակների վերաբերյալ: Ամեն առավոտ ՀՀ բոլոր լրատվամիջոցները, գործակալությունները և հետաքրքրված յուրաքանչյուր կազմակերպություն էլեկտրոնային փոստով ստանում են օրվա քրոնիկոնն ու կառավարման մարմինների ձեռնարկած քայլերի և գործողությունների տեղեկագիրը: Տեղեկատվական, ճանաչողական և ուսուցողական նյութերը տեղ են գտնում նաև **«Արտակարգ ալիք» ինտերնետային կայքում**, որն արդեն լավ համարում ունի ոչ միայն լրագրողների շրջանում: Այստեղից հավաստի և օգտակար տեղեկատվություն են քաղում նաև կառավարման մարմիններն ու հասարակական կազմակերպությունները: Սորոսի հիմնադրամի աջակցությամբ ստեղծված emergency.am-ը հնարավորություն ընձեռեց ստեղծել նաև պաշտոնական ema.am կայքը: 2008 թվականի ապրիլից ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ սկսվել է ինտերնետային կայքի վերակառուցման ու զարգացման ծրագիրը:

Հանրության ավելի լայն շերտերին հասանելի լինելու և իրազեկման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար կենտրոնի ղեկավարությունն օգտագործեց հեռուստահաղորդում պատրաստելու առաջին իսկ հնարավորությունը: 1997 թ. փետրվարից **«Արտակարգ ալիք» հեռուստաընկերությունը** ազգային հեռուստատեսությամբ հեռարձակում էր իր հաղորդումները: Մոտ երկու տարի դրանք եթեր էին գնում՝ շաբաթը մեկ, իսկ 1999-2001 թվականներին՝ շաբաթը հինգ անգամ հաճախականությամբ: Նրա պատրաստած հաղորդումներն ու տեսաֆիլմերը ցուցադրվել են հանրապետության բոլոր հեռուստաընկերություններով: Միայն «Արտակարգ ալիքն» ունի վերջին քսան տարիներին հանրապետությունում արձանագրված բոլոր արտակարգ իրավիճակների և անցկացված ուսումնավարժությունների տեսաարխիվը, ինչպես նաև աղետների կառավարման պետական համակարգի ձեռնարկած քայլերի և իրականացրած քաղաքականության ողջ համայնապատկերը:

1999 թ. ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակը կենտրոնին նկարահանման և մոնտաժային սարքեր տրամադրեց, ինչպես նաև ցուցաբերեց ֆինանսական աջակցություն:

2000 թվականին Մոսկվայի ԱՊՀ և Բալթյան երկրների միջպետական «Իրավակարգ և հասարակություն» 2-րդ կինոհեռուստաֆառատոնում, որին մասնակցում էր 364 հեռուստաընկերություն, ժուռնալիստական հետաքննություն նոմինացիայում հաղթող ճանաչվեց «Արտակարգ ալիք» հեռուստաընկերության պատրաստած «Լակմուս օպերացիան» տեսաֆիլմը:

2003 թվականի մայիս ամսից լույս է տեսնում **«Արտակարգ թերթ» շաբաթաթերթը,** որի գլխավոր նպատակը բնական ու տեխնածին տարաբնույթ աղետներին դիմակայելու՝ բնակչության ու կառավարման մարմինների պատրաստվածության աստիճանի բարձրացումն է: Այն, իրոք, շրջադարձային երևույթ էր արտակարգ իրավիճակների վերաբերյալ հասարակությանն իրազեկելու և ուսուցանելու գործում, որպես հուսալի ու կայուն տեղեկատվական խողովակ: Արտակարգ իրավիճակներում թերթը դառնում է օպերատիվ բյուլետեն, ամբողջական անհրաժեշտ տեղեկատվությամբ՝ սկսած իրադարձության նկարագրությունից մինչև գործնական խորհուրդներ՝ ընդգրկելով դրանցով զբաղվող մարմին-

ների հասցեներն ու հեռախոսների համարները: 2008 թվականին «Արտակարգ թերթի» տպագրության և տարածման ծախսերը հոգացել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակը:

Լրատվականի բաղկացուցիչն է նաև **«Արտակարգ ալիք» ուսումնական կենտրոնը**, որը մշակում է տեղեկատվական քաղաքականություն, կազմում և իրականացնում ուսումնական ծրագրեր:

Միջազգային համագործակցություն և իրականացված այլ ծրագրեր

Չլիներ միջազգային համագործակցությունը՝ իրականություն չէին դառնա նաև ծրագրերը: Սակայն նախ հարկավոր էր, որ իրականություն դառնա այդ համագործակցությունը: Ծրագրերի կարևորությունը բացատրելը մեծ ջանք չէր պահանջում, նրանք մեզնից լավ գիտեն, բայց հարկավոր էր նաև

լինել հուսալի գործընկեր: Եվ միջազգային կազմակերպությունները, որ մշտապես ուշադրության կենտրոնում են պահել «Արտակարգ ալիքի» գործունեությունը, ֆինանսական ու տեխնիկական մեծ աջակցություն տրամադրեցին կենտրոնին: «Արտակարգ ալիքը» լուրջ փորձաքննության են ենթարկել ՆԱՏՕ-ի անդամ երկրների և միջազգային կազմակերպութ-

յունների փորձագետները, որոնք դեռ 2001 թ. ֆինանսավորման են ներկայացրել կենտրոնի հարկաբաժնի և հեռուստատեսության ծրագիրը: ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի անհատական համագործակցության փաստաթղթում առանձին հոդվածաշար կա «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնի ծրագրերի համար՝ սկսած իրավիճակային կենտրոնի, միջգերատեսչական լրատվական կենտրոնի ստեղծումից մինչև ճգնաժամերի կառավարման հանրային իրազեկման պլաններ, ծրագրեր ու դասընթացներ:

ԱՄՆ ՁԳ ֆինանսավորմամբ, ՄԱՁԾ աջակցությամբ հիմնանորոգվել է Ավանում գտնվող քաղպաշտպանության քառահարկ շենքը, որտեղ լրատվականի համար կառուցվեց հինգերորդ հարկ՝ առանձին հարկաբաժին՝ հեռուստատաղավարով, բրիֆինգ կենտրոնով, համակարգչային սրահով, աշխատասենյակներով:

2005 թ. դեկտեմբերի 8-ին «Արատակարգ ալիքի» նորակառույց ճեպազրույցների սրահում տեղի ունեցավ առաջին միջոցառումը՝ «Սպիտակի երկրաշարժ. 17 տարի անց» թեմայով:

Այս յուրօրինակ «Վերնատունը» սկսեց գործել՝ շարունակելով իր առաքելությունը նոր որակներով ու նոր հնարավորություններով: Իրականացվեցին նոր ու հին, մեծ ու փոքր ծրագրեր, որոնցից կարևորագույնը հնարավոր դարձավ Շվեյցարիայի զարգացման գործակալության հետ համագործակցության շնորհիվ: Այս գործակալության կողմից ֆինանսավորվող «Արձա-

գանք» ծրագրի շրջանակներում 2007 թվականին իրականացվեց «Հրշեջները համայնքներում» հանրային իրազեկման պիլոտային ծրագիրը:

ՀՀ բոլոր հրշեջ մասերից երկուական հրշեջ-փրկարար ուսուցում անցան «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնում՝ ինչպես աշխատել բնակչության և ՁԼՄ-ների հետ, զինվեցին դիդակտիկ բազմաթիվ նյութերով՝ պաստառ, օրացույց, գիրք-բրոշյուրներ, էջանշաններ և այլն ու վերադարձան իրենց մարզ, այցելեցին համայնք ու դպրոց, զրուցեցին, բացատրեցին, իրազեկեցին ու տեղեկացրին, նյութեր բաժանեցին: 2007 թվականի պիլոտային ծրագրի հաջող իրականացումը լավ գնահատականի արժանացավ ոչ միայն շվեյցարացի, այլև միջազգային այլ փորձագետների կողմից, և որոշվեց մինչև 2010 թվականի վերջը ծրագիրը շարունակել բոլոր մարզերում ու Երևանում:

«Արտակարգ ալիքի» համագործակցությունը Միավորված ազգերի կազմակերպության հետ առավել խորացավ 2007 թվականին, երբ այդ տարվա նոյեմբերին ՄԱԿ-ի աղետների կառավարման թիմի հետ, որում ընդգրկված են ՄԱԿ-ի բոլոր գործակալությունները, պայմանագիր կնքվեց տեղեկատվության փոխանակման վերաբերյալ, իրականացվեց ուսուցում ու մշակվեց արտակարգ իրավիճակների տեղեկատվության համատեղ պլան:

«Վերնատունն» արդեն երկու տարեկան էր, երբ նույն, 2007 թ. դեկտեմբերին ԵԱՀԿ և ՄԱԿ-ի ֆինանսավորմամբ միջազգային փորձագետների կողմից իրականացվեց «Արտակարգ ալիքի» հնարավորությունների և զարգացման ուղղությունների գնահատում, որի արդյունքների հրապարակումը և ներկայացումը շահագրգիռ կողմերին՝ էլ ավելի բարձրացրեց «Արտակարգ ալիքի» վստահելիության և համագործակցելիության վարկն ու հեղինակությունը միջազգային կազմակերպությունների շրջանում:

ՄԱԶԾ-ի աջակցությամբ 2008 թ. Արարատի մարզում իրականացվեց հանրային իրազեկման պիլոտային ծրագիր, պատրաստվեցին տեսաֆիլմեր ու սոցիալական հոլովակներ, տպագրվե-

ցին ուսումնական նյութեր: Նույն ծրագրի շրջանակներում, տեխնիկական աջակցությանը զուգահեռ, իրականացվեցին «Արտակարգ ալիք» ինտերնետային պորտալի վերակառուցման, ինչպես նաև «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնի՝ Աճառյան և Պուշկինի փողոցների գրասենյակների օպտիկամանրաթելային ինտերնետային կապի, ընդհանուր ցանցի ստեղծման ու ծրագրային ապահովման աշխատանքներ:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը նույնպես կարևորել է արտակարգ իրավիճակներին դիմակայելու կարողությունների զարգացումն ու այդ ոլորտում բնակչության իրազեկման կարևորությունը: Հաշվի առնելով «Արտակարգ ալիքի» հանրային իրազեկման ծրագրեր իրագործելու բազմամյա փորձն ու հեղինակությունը, 2008 թ. ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ վերսկսվել է «Արտակարգ ալիք» ամենշաբաթյա հեռուստա և ռադիո հաղորդաշարերի թողարկումը, կազմակերպվել են հասարակայնության հետ կապերի նորագույն ձևերի ու մեթոդների վերաբերյալ դասընթացներ, ցուցաբերվել է փորձագիտական աջակցություն, իրականացվել են «Արտակարգ ալիքի» տեղեկատվական բոլոր խողովակների պատկերի ու գույնի նույնացման, ներկայացուցչական փաթեթի մշակման աշխատանքներ, ֆինանսական աջակցություն է տրամադրվել «Արտակարգ թերթին»՝ տպագրության և տարածման համար:

2008 թ. ապրիլի 19-ին Հայաստանն առաջին անգամ իր ազգային սցենարով մասնակցեց ՆԱՏՕ-ի ճգնաժամերի կառավարման վարժանքին, որը հնարավորություն տվեց փորձարկելու ՀՀ

ճգնաժամային կառավարման կենտրոնի հնարավորությունները, ստուգելու կենտրոնում ներգրավված գերատեսչությունների համաձայնեցված և արդյունավետ գործելու ունակությունները ազգային ու միջազգային մակարդակներում: «Արտակարգ ալիքի» առաջարկով առաջին անգամ խաղարկվեց նաև հանրային իրազեկման բաղադրիչը: Ուսումնավարժության սցենարի խաղարկումը տեղի ունեցավ «Արտակարգ ալիքի» ճեպազրույցների սրահում:

2008 թ. Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետում ներդրվեց «Լրատվությունն արտակարգ իրավիճակներում» նոր առարկան:

Կան ծրագրեր, որոնց նախապատրաստական փուլն ավարտվել է, մնում է իրագործումը:

Նկատի ունենալով հանրապետության մարզերի խոցելիությունը տարաբնույթ աղետների նկատմամբ, 2008 թ. JTZ-ի կողմից ֆինանսավորվող «Արտակարգ իրավիճակների կանխարգելումը Հարավային Կովկասում» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում նախատեսված է մարզային հանրային իրազեկման կենտրոնների ստեղծում Տավուշի և Լոռու մարզերում:

Նույն թվականին համագործակցության հուշագիր ստորագրվեց ՆԱՏՕ-ի հանրային տեղեկատվության կենտրոնի և «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնի միջև:

«Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնը դեռևս 2004 թ.

համագործակցության լուրջ հիմքեր է ստեղծել նաև ԱՄՆ-ի Կանզասի նահանգի ազգային գվարդիայի հետ: 2005 թ. մարտին իրականացվեց երկօրյա կոնֆերանս՝ «Ճգնաժամային հաղորդակցության ռազմավարությունը» թեմայով:

Նույն տարվա սեպտեմբերին Կանզասում եղավ Հայաստանի պատվիրակությունը: Կանզասի օդային ազգային գվարդիայի կենտրոնակայանում կայացած հանդիպման ժամանակ գեներալ Բանթինգին ներկայացվեց նաև «Արտակարգ ալիքը»: Գեներալին չափազանց դուր եկավ «Արտակարգ քերթի»՝ «Ով իրազեկված է, նա պաշտպանված է» կարգախոսը, և նա հանձնարարեց իր աշխատակիցներին՝ այն, ինչպես նաև առաջին

իրազեկված ու պաշտպանված մարդու՝ Նոյի գաղափարն անպայման օգտագործել իրենց ուսուցողական նյութերում:

2007 թ. սեպտեմբերին «Արտակարգ ալիքի» ճեպազրույցների սրահում Կանզասի ազգային գվարդիայի պատվի-

ռակության անդամները դասընթաց անցկացրեցին ՀՓԾ տարբեր ստորաբաժանումների աշխատակիցների համար:

Կանզասցի դիտորդները մասնակցեցին նաև Գյումրիում կազմակերպված խոշորամասշտաբ ուսումնավարժությանը՝ «ՀՀ Շիրակի մարզում բնակչության պաշտպանության կազմակերպումն ավերիչ երկրաշարժի դեպքում» թեմայով:

2008 թ. հուլիսի 14-18-ը Կանզասի ազգային գվարդիայի մասնակցությամբ Երևանում անցկացվեց «Ատոմ-2008» ուսումնավարժությունը, որի ընթացքում առանձին սցենարով խաղարկվեց նաև հանրային իրազեկման բաղկացուցիչը՝ ՀՀ ճգնաժամային տեղեկատվության կառավարման միջգերատեսչական լրատվական կենտրոնի կարողությունների ստուգում-փորձարկումը: Լրատվական ծառայությունների աշխատակիցների համար սեմինարներ անցկացրեցին Կանզասի ազգային գվարդիայի ներկայացուցիչները:

Իսկ նույն թվականի հոկտեմբերին հայ փորձագետների հետ Կանզասի «Գայլի գետակ» ատոմակայանում կազմակերպված ուսումնավարժությանը մասնակցեց նաև «Արտակարգ ալիքը»:

Անելիքներ ու ռազմավարական պլան

2008 թվականին ՄԱԶԾ ֆինանսավորած միջազգային փորձագետի աջակցությամբ մշակվեց «Արտակարգ ալիքի» հետագա գործողությունների հնգամյա ռազմավարական պլանը:

Իսկ մինչ այդ, 2007 թ. հունիսին ՀՀ նախարարությունների մամուլի քարտուղարների՝ Բրյուսել, ՆԱՏՕ-ի շտաբկայան ճանաչողական այցից հետո, Հայաստան-ՆԱՏՕ միջգերատեսչական հանձնաժողովում ստեղծվեց հանրային տեղեկատվության հատուկ հանձնախումբ: Հաջորդ քայլը լինելու է «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնի հիման վրա ՀՀ միջգերատեսչական լրատվական կենտրոնի ստեղծումը:

Այսօր արտակարգ իրավիճակներում հանրային իրազեկումը նաև կառավարության ուշադրության կենտրոնում է: Արտակարգ իրավիճակների հանրային իրազեկման համակարգի հիմնավոր կայացման գործընթացն ընդգրկված է ՀՀ կառավարության ծրագրի կատարումն ապահովող 2008-2012 թթ. միջոցառումների ցանկի մեջ:

Ինչպես տեսնում եք՝ անելիքները շատ են, իսկ ռազմավարական պլանը՝ պարտավորեցնող:

ՄԱԿ-ի Աղետների կանխարգելման «Աղետներին պատրաստվածության և ռիսկերի նվազեցման ազգային կարողությունների ամրապնդում» ծրագրի շրջանակներում մշակված ռազմավարությունը, սակայն, ենթադրում է հանրապետության գրեթե բոլոր նախարարություն-գերատեսչությունների, ՁԼՄ-ների, բնակչության բոլոր խավերի մասնակցությունը ծրագրի իրականացման գործին:

«Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնի տնօրենի նամակուղերձն իր մեջ պարունակում էր նաև այդ ռազմավարական պլանի հիմնական բաղադրիչները, այդ պատճառով էլ հատվածաբար մեջբերում ենք ուղերձը:

Չկա այնպիսի մի արտակարգ իրավիճակ, որից դուրս գալու ելքը չգտնվի:
Եթե նույնիսկ պահն ամենադժվարինն է, անհուսալին կամ անելանելին, մի վհատվեք:

Նիկոլայ Գրիգորյան

Հարգելի՛ գործընկերներ, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներ՝ նախարարներ, տնօրեններ, մարզպետներ, քաղաքապետներ ու գյուղապետներ, լրագրողներ և լրատվության պատասխանատուներ, աշակերտներ և ուսանողներ, ուսուցիչներ և դասախոսներ, սիրելի ժողովուրդ:

Ամեն տարի բնական, տեխնածին, բնապահպանական, համաճարակային ու սոցիալական աղետները լուրջ վնաս են հասցնում մեր երկրին ու ժողովրդին... Միջազգային փորձագետներն ընդգծում են, որ աղետներն ամենամեծ վնասը հասցնում են աղքատ ու զարգացող երկրներին, որոնք հնարավորություն չունեն լուրջ ներդրում կատարելու արտակարգ իրավիճակների կառավարման ոլորտում:

Այս պարագայում մեծապես կարևորվում է մեր բնակչության իրազեկվածությունն ու պատրաստվածությունը, ինչի շնորհիվ բոլոր տեսակի արտակարգ իրավիճակների հետևանքները՝ զոհերի, վիրավորների թիվը, նյութական կորուստները, կարող ենք նվազեցնել մոտ քառասուն տոկոսով:

Անբավարար պատրաստվածության աղետալի հետևանքների ականատեսը մենք եղանք 88-ի Սպիտակի երկրաշարժի ժամանակ: 20 տարի առաջ տեղի ունեցավ համաաղետ, որին մենք պատրաստ չէինք... Իսկ պատրաստ ենք, արդյոք, հաջորդ երկրաշարժին:

Ի տարբերություն դավին անտեղյակ, ցավին անտարբեր խորհրդային մեր հայրենակիցների, այսօր մենք վստահաբար գիտենք. ցնցումներ կարող են լինել, և դրանք կարող են յոթ բալից բարձր լինել: Իսկ եթե ստույգ սպառնալիքը կա, և, ցավոք, դա միակը չէ, ապա մենք պարզապես պարտավոր ենք պատրաստ լինել:

Հստակ սահմանելով նպատակը, հետևողականորեն հաղթահարելով բոլոր խոչընդոտները, այսօր կարող ենք փաստել, որ կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, բնակչության իրազեկվածության ու պատրաստվածության բարձրացման համար բոլոր նախապայմանները ստեղծված են:

Տեղական ու միջազգային փորձագետների հետ միասին ստեղծում ենք մեր հանրապետությանն ու մեզ սպառնացող բոլոր վտանգների, ռիսկերի ու դրանց կառավարման հիմունքների տեղեկատվական պահոց: «Արտակարգ ալիք» հեռուստաընկերությունը, ռադիոն, թերթն ու կայքը, ինչպես նաև «Արտակարգ ալիքի» օրեցօր մեծացող գրադարանը կփորձեն ամբողջացնել տեղեկատվական դաշտը:

«Արտակարգ ալիքի» գործունեության մոտակա 5 տարվա ընթացքում մենք ակնկալում ենք հասնել հետևյալ արդյունքներին.

- բարձրացնել պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և բնակչության իրազեկվածության ու պատրաստվածության աստիճանը մի քանի անգամ.

- հանրապետության համարյա բոլոր ՁԼՄ-ներին ընդգրկել ԱԻ տեղեկատվական կառավարման ոլորտ. նրանք արդեն իրազեկ ու պրոֆեսիոնալ կիրականացնեն իրենց սոցիալական պարտքը՝ ԱԻ կանխարգելման, նախապատրաստման, մեղմացման, արձագանքման և վերականգնման փուլերում տեղեկատվության փոխանցման, ինչպես նաև հասարակությանը գիտելիքներ տրամադրելու ուղղությամբ.

- «Արտակարգ ալիքը» պարբերական, անխափան եթեր կունենա հեռուստատեսությամբ և ռադիոյով, համագործակցելով բոլոր, այդ թվում նաև մարզային հեռուստառադիոընկերությունների հետ.

- կմշակվեն բնակչության իրազեկվածության և պատրաստվածության աստիճանի գնահատման չափանիշները.

- ԱԻ-ի և դրանց ռիսկերի վերաբերյալ կլինի տվյալների ամբողջական, պարբերաբար թարմացվող՝ տեսաձայնային, տպագիր ու էլեկտրոնային բազա: «Արտակարգ թերթը» կդառնա տասնվեց էջանոց ու գունավոր, «Արտակարգ ալիք» ինտերնետային պորտալը հետաքրքիր ու անհրաժեշտ կդառնա նաև դպրոցների ու բուհերի համար.

- կստեղծվի ճգնաժամերի տեղեկատվության կառավարման միջգերատեսչական լրատվական կենտրոն. ճգնաժամերի ժամանակ երկիրը կխոսի մեկ ձայնով.

- կմշակվի ՀՀ տեղեկատվական անվտանգության ռազմավարություն.

- «Արտակարգ ալիք» ուսումնական կենտրոնում մշտապես ուսուցում կանցնեն լրագրողներ, ՁԼՄ-ների և հասարակայնության հետ կապերի պատասխանատուներ, ԱԻ արձագանքողներ, ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողներ.

- արտակարգ իրավիճակների վերաբերյալ աշխարհում եղած լավագույն շատ ծրագրեր, գրականություն, ճանաչողական, ուսուցողական նյութեր կթարգմանվեն հայերեն.

- բոլոր մարզերում կիրականացվեն «Աղետակայուն համայնքներ», «Հրշեջ-փրկարարները համայնքներում» և «Աղետակայուն դպրոցներ» ծրագրերը.

- կստեղծվեն հանրային իրազեկման մարզային կենտրոններ.

- բոլոր մարզերը կունենան արտակարգ իրավիճակներից պաշտպանվելու պլաններ, որոնք կընդգրկվեն մարզերի զարգացման ծրագրերում.

- տնտեսական կորուստները կնվազեն՝ նպաստելով մարզերի տնտեսական կայուն զարգացմանն ու աղքատության կրճատմանը:

Սիրելի լրագրողներ և հասարակայնության հետ կապերի ու լրատվության պատասխանատուներ, ԱԻ արձագանքող կազմակերպությունների ղեկավարներ. սա մեր բոլորի ծրագիրն է, սա մեր երկրի, մեր ժողովրդի անվտանգության հիմքերի անկյունաքարերից է, որը միասին պիտի տեղադրենք:

«Արտակարգ ալիքն» ավելի քան տասը տարի արտակարգ տեղեկատվություն է տրամադրում բոլորիդ, այսուհետ, ավելի նոր ու նորոգ խողովակներով՝ ավելին կանի: Մեր արդյունավետ համագործակցության կամուրջներին կանաչ ճանապարհ ու երկկողմանի աշխույժ երթևեկ եմ մաղթում:

Ռազմավարությանն ամբողջությամբ կարող եք ծանոթանալ ***www.emergency.am*** *կայքէջում*

Հետգրություն

«Արտակարգ ալիքի» անձնակազմը վստահ է, որ կենտրոնի հանրային իրազեկման ծրագրերի շնորհիվ արտակարգ իրավիճակների, դրանց կանխարգելման և հետևանքների նվազեցման մեխանիզմների, այդ ուղղությամբ կառավարման մարմինների գործողությունների և բնակչության վարքականոնների վերաբերյալ տեղեկատվական, ճանաչողական, խորհրդատվական և ուսուցողական դաշտի ստեղծումը մարդկային կյանքեր կփրկի: Չկա սրանից ավելի սուրբ նպատակ: Սակայն սա նաև կապահովի մարդկանց իրավունքն իմանալու, թե ինչ վտանգներ են իրենց սպառնում, իրենք ինչ պիտի անեն, և ինչ է անում պետությունը՝ իրենց պաշտպանելու համար: Ավելին, այս դաշտի ստեղծումը կնպաստի երկրի՝ արտակարգ իրավիճակների կառավարման ընդհանուր համակարգի արդյունավետության բարձրացմանը, ռիսկերի՝ կորուստների ու վնասների նվազեցմանը, հրապարակայնության ու թափանցիկության ապահովմանը, անվտանգության կուլտուրայի դաստիարակմանը, համայնքների ու մարզերի, այս ոլորտում լրատվամիջոցների և հասարակական կազմակերպությունների գործունեության ընդլայնմանն ու նպատակամղվածությանը, երկրի տնտեսության զարգացմանը, խոցելիության ու աղքատության նվազեցմանը, քաղաքացիական հասարակության զարգացման իրական հնարավորությունների ստեղծմանը, միջազգային կազմակերպությունների և միջպետական կառույցների առջև երկրի ստանձնած պարտավորությունների իրականացմանը և այլն:

Եվ այլնը շարունակեք ձեր ցանկությամբ, սակայն նույն տրամաբանությամբ՝ ով իրազեկված է, նա պաշտպանված է:

«ԱՐՏԱԿԱՐԳ ԱԼԻՔ»
լրատվական կենտրոն

«Նոյյան Տապան» տպագրատուն
ՀՀ, Երեւան 9, Իսահակյան 28, հեռ. (37410) 565965
E-mail: contact@noyan-tapan.am
URL: http://www.nt.am